ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻՆՅԱՆ
ARMINE GAGINYAN

ԻՆՖԻՆԻՏԻՎԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԸ ՌՈՒՍ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինֆինիտիվի ծագման և բնույթի հարցը տարբեր կերպ է լուծվել լեզվաբանության պատմության ընթացքում: Եթե անտիկ շրջանում մտածողներին ավելի շատ հետաքրքրում էր ինֆինիտիվի բնույթի հարցը, ապա արդեն ռուս և եվրոպական՝ հատկապես պատմահամեմատական քերականություններում, առաջին պլան է մղվում ինֆինիտիվի ծագման հարցը: Այստեղ առաջին հերթին հիշատակելի է գերմանացի լեզվաբան Ֆր. Բոպպի անունը, որն անվանական ծագում է վերագրում ինֆինիտիվին[1]: Ուսումնասիրելով սանսկրիտի, հին հունարենի, գոթերենի, պարսկերենի ինֆինիտիվները՝ նա Պանինիի և Սակտիոսի նման ինֆինիտիվը անվան քարացած հոլով է համարում[2]:

Ժամանակի ընթացքում փորձ է արվում տալ նաև ինֆինիտիվի նախածները: Ի տարբերություն Կ. Բրուգմանի, որը վկայված ինֆինիտիվները հանգեցնում է նախահնդեվրոպական շրջանում զարգացող վերացական բայանունների[3], Ա. Մեյեն և Գ. Կուրցիուսը ինքնուրույն զարգացում են վերագրում հնդեվրոպական առանձին բարբառների ինֆինիտիվներին[4]: Կուրցիուսը նշում է նաև, որ ինֆինիտիվն իր ծագումով լինելով վերացական գոյականի քարացած հոլով, շատ ավելի մոտ է բային քան վերացական գոյականները[5]:

Այուս կողմից փորձ է արվում հստակեցնելու ինֆինիտիվի հիմքում ընկած հոլովները: Այսպես՝ ըստ Հիրտի՝ ինֆինիտիվը չի կարելի հանգեցնել միայն մեկ հոլովի, ասենք՝ տրականի: Նա չի բացառում նաև, որ հաճախ այդ ինֆինիտիվի վերջավորությունները ոչ թե հոլովական վերջավորություններ են,

---

[1] Bopp Fr., Conjugationssystem der Sanskritsprache, Frankfurt am Main, 1816, S. 37-39.

[2] Հմմտ. Jolly J., Geschichte des Infinitivs im Indogermanischen, Mϕnchen, 1873, S. 38-44, 47–50:

[3] Brugmann K., Delbrück B., Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Bd. 4, /Syntax von B. Delbrück/, Teil 2., Strassburg, 1897. Հմմտ . Jeffers R. J., Remarks on indo-european infinitives, Language, vol. 51, 1, 1975, p. 135.

[4] Мейе А., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938. Հմմտ. Jeffers R. J., Remarks on indo-european infinitives, Language, vol. 51, 1, 1975, p. 135.

[5] Jolly J., նշվ. աշխ . էջ 79-80:

այլ, այսպես կոչված, անորոշ հոլով և աճական, ինչպես օրինակ՝ հունարենի ai-ը[6]:

Ինֆինիտիվի ծագմանն է անդրադարձել նաև ամերիկացի լեզվաբան Յ. Զեֆերսը, որը փորձելով վերականգնել հ.-ե. ինֆինիտիվը՝ տարբերակում է ինֆինիտիվի երկու հակադիր խումբ Ա և Բ: Առաջինը համարվում է ժամանակագրորեն ավելի արխաիկ ձև՝ թեմատիկ հիմք (ներկայի հիմք) + ինֆինիտիվ վերջավորություն, իսկ երկրորդը, որն ավելի ուշ զուգաբանություն է ունի հետևյալ կառուցվածքը՝ արմատ + վերջածանց + հոլովական վերջավորություն: Ըստ Զեֆերսի՝ այս շերտը ներկայացնում է սահմանափակ թվով զուգաբանություններ և վերագրվում է բարբառների էթնիկ տարբերակման շրջանին [7]:

Ընդունելով Բոպպի այն տեսակետը, որ ինֆինիտիվը նախապես անուն է եղել, նա ենթադրում է, որ ինֆինիտիվի բոլոր վերջածանցները փաստացի զարգացել են որպես բայանունների ձևաբանական վերաիմաստավորման հետևանք, որի արդյունքում բայանունը դարձել է դերբայ: Այս գործընթացը, ըստ նրա, հավանաբար սկսվել է ինֆինիտիվի խնդրառությունից, այսինքն՝ այն պահից, երբ այն սկսել է խնդիր պահանջել:

Ա տիպի ինֆինտիվները կազմվում են բայական կերպային հիմքերից: Սա Ա տիպի ինֆինիտիվի կանոնն է նաև մյուս լեզուների համար, ավեստայի լեզվում՝ -dyāi, որը հանդես է գալիս թեմատիկ հիմքով, -aya `պատճառական հիմքով, -ya-՝ վիճակի փոփոխության և կրկնակ հիմքով: Թոխարարենի -tsi-ն, որը *-dhyāi վերջածանցով Ա տիպի ինֆինիտիվի արտացոլումն է, ավելանում է ներկայի հիմքին արևելյան թոխարերենում և սուբյունկտիվի (ղղծականի) հիմքին՝ արևմտյան թոխարերենում: Ա տիպի են հունարենի բոլոր ինֆինիտիվները, ինչպես նաև լատիներենի ինֆինիտիվը: Վեդայական լեզվում կա և՛ Ա, և՛ Բ տիպի ինֆինիտիվներ: Բ տիպին են պատկանում արմատային ինֆինիտիվը և *-tu* –ով ինֆինիտիվը: Ընդ որում նրան գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերություն մեջ: Ի տարբերություն Ա տիպի ինֆինիտիվի, որն օժտված է խնդրառությամբ, արմատային և *-tu* –ով ինֆինիտիվները չունեն խնդրառություն, որն էլ հեղինակին թույլ է տալիս դրանք համարելու հարաբերականորեն ուշ առաջացած ձևեր, որոնք պահպանում են անվանական հոլովումը: Արխաիկ ձևեր են համարվում -taye, -ase, -se, -sani, -mane, -vane, -

---

[6] Տե՛ս Hirt H., Indogermanische Grammatik, Teil VII, Syntax II, Die Lehre vom einfachen und zusammengesetzten Satz, Heidelberg, 1937, S.102–105.

[7] Jeffers R. J., նշվ. աշխ., էջ 135:

tari վերջածանցներով ինֆինիտիվները, որոնք բխելով բայական հիմքից՝ պատկանում են Ա խմբին[8]:

Գերմանական, օսկ-ումբրիան ցնդի և հայերենի ինֆինիտիվները Զեֆերսը բխեցնում է համապատասխան անուններից և նշում, որ դրանք ուշ երևութ են և փոխարինում են ավելի հին ինֆինիտիվներին[9]: Հաշվի առելով այն հանգամանքը, որ ուշը նրա մոտ նույնացվում է Բ տիպին,պետք է ենթադրել, որ դրանք Բ տիպի են:

Բացի ինֆինիտիվին անվանական ծագում վերագրելուց եվրոպական քերականություններում կա նաև հակառակ կարծիքը, որի համաձայն նրան բայական ծագում են վերագրում:

Դեռևս Հիրտը տարբերակում է երկու տեսակ ինֆինիտիվ՝ կախյալ ինֆինիտիվ, որը համապատասխանում է անվանական որևէ հոլովի և անկախ ինֆինիտիվ, որը համապատասխանում է դիմավոր բային[10] ՝հատկապես հրամայական գործածության դեպքում[11]:

Ըստ Բենվենիստի՝ հունարենում և հնդիրանական լեզուներում ինֆինիտիվի արմատային ձևի անորոշ բնույթով է պայմանավորված այն, որ մի դեպքում կարող է առաջանալ ինֆինիտիվ, մյուս դեպքում՝ հրամայական եղանակ[12]: Ինչպես տեսնում ենք, նա ինֆինիտիվը փորձում է կապել հրամայականի հետ, քանի որ ինֆինիտիվն ու հրամայականը բխեցնում է նույն արմատից:

Ինչպես նկատում է Վ. Յարցևան՝ եթե ծագումնաբանական տեսանկյունից պատմահամեմատական քերականությունը կարող է սահմանել ինֆինիտիվի մերձեցումը մյուս գոյականներին, որոնք կազմվել են գոյականների և բայերի համար ընդհանուր արմատներից, ապա բայական համակարգում ներկայացնող քերականական կարգերի ընդրգրկումով ինֆինիտիվը հաճախ մոտենում է բայի դիմավոր ձևերին և այդ պատճառով հեռանում բայանվանական կազմություններից:

Ինֆինիտիվի ձևաբանական կապը բայի դիմավոր ձևերի հետ , ըստ նրա, ներկայացվում է ոչ միայն ինֆինիտիվի որոշակի մուտքով խոնարհման հարացույց, այլև արմատային ձևույթի միասնությամբ: Ճիշտ է ,մի շարք հին հնդեվրոպական լեզուներում առկա բավականին շատ սուպլետիվիզմը ստիպում է

---

[8] Jeffers R. J., նշվ. աշխ, էջ 135–141:
[9] Jeffers R. J., նշվ. աշխ, էջ 146:
[10] H. Hirt, նշվ. աշխ, էջ 287–268:
[11] H. Hirt, նշվ. աշխ., էջ 113–114:
[12] Бенвенист Э.,Индоевропейское именное словообразование, М., 1955, с. 164.

ընդունել հարացուցային չափանիշների գերակայությունը բառակազմական չափանիշների նկատմամբ:

Այնուամենայնիվ ինֆինիտիվի արմատից կազմվում է դիմավոր բայի խոնարհման մեկ կամ մի քանի հիմքեր (օրինակ՝ գերմանական լեզուներում՝ միայն ներկայի հիմքը, լատիներենում և հին հունարենում՝ տարբեր հիմքեր): Իսկ սլավոնականում ինֆինիտիվը և սուպինը երբեք չեն կցվում անմիջականորեն ներկայի հիմքին: Բալթյան լեզուներում և պարսկերենում ինֆինիտիվը նույնպես կախված չէ ներկա ժամանակից[13]:

Ինչ վերաբերում է ինֆինիտիվի բնույթի խնդրին, ապա այն լուծվում է եվրոպական այլ քերականություններում, ինչպես նորմատիվ-դպրոցական, տրամաբանական, ձևական, իմացաբանական և այլն:

Այստեղ առաջին հերթին հարկ է նշել, որ նորմատիվ -դպրոցական թարգմանչական, ինչպես նաև տրամաբանական քերականություններում ինֆինիտիվը ավանդույթի համաձայն մնում է բայի եղանակների կազմում:

Պոր-Ռոյալի քերականության հեղինակները հետազոտման արդյունքում տարբերակում են 10 խոսքի մաս (անուն, ածական, հոդ, դերանուն, բայածական, նախդիր, բայ, մակբայ, շաղկապ և ձայնարկություն)[14]:

Ռուսերենի տրամաբանական քերականություններում նույնպես այն մնում է բայի եղանակների շարքում, թեև հաճախ, ինչպես օրինակ՝ Ֆ. Բուսլաևի քերականության մեջ, ընդունվում է նաև նրա անվանական ծագումը[15]:

Ռուս և եվրոպական ձևական քերականություններում այն տարբեր կերպ է ընկալվում: Մի կողմից այն համարվում է առանձին խոսքի մաս կամ բաշխվում մյուս խոսքի մասերի միջև, մյուս կողմից՝ ներառվում բայի համակարգի մեջ: Եթե դիտարկվում է ձևաբանության տեսանկյունից, ապա այն հիմնականում համարվում է առանձին խոսքի մաս կամ բաշխվում մյուս խոսքի մասերի միջև, իսկ կիրառական տեսանկյունից՝ դասվում է բայի շարքին:

Այսպես՝ ձևական քերականության խոշորագույն ներկայացուցիչ Հ. Սուիտը խոսքի մասերի դասակարգման հիմնական սկզբունք համարելով ձևաբանական չափանիշները՝ խոսքի մասերը բաժանում է երկու հիմնական խմբի փոփոխվող և անփոփոխ: Ընդ որում՝ փոփոխվող էին համարվում գոյականը, ածականը և բայը: Այս դասակարգմանը զուգահեռ Հ. Սուիտն առա-

---

[13] Ярцева В. Н., Глагольные категории в инфинитиве индоевропейских языков, в кн. "Иранское языкознание", М., 1976, с. 54.

[14] Бокадорова Н. Ю., Французская лингвистическая традиция XVIII – начала XIX века. М. , 1987, с. 26.

[15] Буслаев Ф. И., Историческая грамматика русского языка, М., 1959, с. 372 .

ջարկում է մեկ այլ դասակարգում, որը հիմնված է բառերի որոշակի դասերի շարահյուսական գործառույթի վրա, որտեղ «բայական խումբը» ներկայացված է դիմավոր և անդեմ ձևերով[16]:

Մյուսները, ինչպես Հ. Պալմերն ու Ֆ. Բլենդֆորդը իրենց աշխատության մեջ նույնպես բոլորը անդեմ ձևերը ներառում են բայական համակարգում[17]:

Ռուսերենի ձևական քերականության հիմնադիր Ֆորտունատովը հանդես գալով որպես պսիխոլոգիզմի և ֆորմալիզմի հաշտեցնող՝ ընդհանուր հնդեվրոպականի տրոհման շրջանի համար առանձնացնում է գոյականի, ածականի, բայի, մակբայի քերականական դասերը, իսկ հետագայում առաջացած առանձին լեզուների համար ինֆինիտիվի քերականական դասը՝ այսպիսով ինֆինիտիվը համարելով առանձին խոսքի մաս[18]:

Դ. Ուշակովը՝ որպես ուլտրաֆորմալիզմի ներայացուցիչ՝ թեև բառերը դասակարգում է հիմնականում ձևական տեսանկյունից, սակայն դիմում է նաև իմաստային դասակարգման և անորոշ դերբայը ներառում է բայական համակարգի մեջ: Ընդ որում «բայ» տերմինը համարում է «գոյական» և «ածական» տերմինների համեմատությամբ պայմանական. վերջիններս, ըստ նրա, օգտագործվում են և իմաստային, և ձևական առումով, մինչդեռ առաջինը գործածվում է միանգամայն տարբեր ձևեր ունեցող բառերի (ըստ Ուշակովի բայանունների, անորոշ դերբայի, ներկա ու ապառնի ձևերի, անցյալ ձևերի և եղանակային ձևերի) համար[19]:

Ա. Պեշկովսկին նախապես տարբերակում է յոթ խոսքի մաս՝ բայ, գոյական, ածական, բայածական (причастие), մակբայ, մակդերբայ (деепричастие) և անորոշ դերբայ (инфинитив) (1914), իսկ այնուհետև (1928), տարբերակում է միայն չորսը՝ բայ, գոյական, ածական, մակբայ: Այլ կերպ՝ երրորդ հրատարակության մեջ Պեշկովսկին անորոշ դերբայը (инфинитив) չի համարում առանձին խոսքի մաս, այլ դիտարկում է որպես բայի հիմնական ձևերից մեկը[20]:

Ժամանակակից քերականություններում հիմնականում այդ հարցը լուծվում է իմացաբանական տեսանկյունից և ինֆինիտիվը համարվում է բայի համակարգի մի մաս: Թե՛ եվրոպական և թե՛ ռուս նորմատիվ քերականու-

---

[16] Иванова И. П., Бурлакова В. В., Поченцов Г. Г., Теоретическая грамматика современного английского языка. М. , 1981с. 15-16.
[17] Palmer H., Blandford F., A Grammar of Spoken English, Cambridge, 1939, p. 97.
[18] Фортунатов Ф. Ф., Избранные труды, т. I. М., 1956, с.158-166.
[19] Զահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, հատ. 2, Եր., 1962, էջ 157:
[20] Белов А. И., Грамматическая система академика А. А. Шахматова.- Ученые записи Ор. Зуев. пед. инст-а, т. 3,вып.2., М., 1956, с. 188.

թյուններում ինֆինիտիվը համարվում է բայի անդեմ կամ անվանական ձևերից մեկը և ներառվում բայական համակարգում[21]:

Իսկ որոշ քերականություններում այն դեռևս դիտարկվում է որպես առանձին խոսքի մաս: Այսպես՝ դանիացի լեզվաբան Օ. Եսպերսենը խոսքի մասերը դասակարգելիս կարևորում է և ձևը, և գործառույթը, և իմաստը[22]: Ինֆինիտիվը նա մյուս դերբայների հետ մեկտեղ համարում է միջին դաս (ՐՈՉՐ՚Պ) բայի և անվան միջև, բայը սահմանափակելով միայն դիմավոր ձևերով [23]:

Կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչ Լ. Տենյերը ինֆինիտիվին նույնպես ուրույն բնույթ է վերագրում: Լինելով ելակետակային առումով բայ, իսկ արդյունքային առումով՝ գոյական՝ ինֆինիտիվը, ըստ նրա, իր մեջ միացնում է բայական և գոյականական հատկանիշները՝ միջին դիրք գրավելով երկուսի միջև: Բայից նա ժառանգել է արժույթի ունակությունը, իսկ գոյականից, որին նա փոխակերպվել է, ինֆինիտիվը պարտական է որպես ակտանտ հանդես գալու ունակությամբ[24]: Ուշագրավ է, որ նա ինֆինիտիվի զարգացումը բոլորովին այլ կերպ է բնորոշում՝ ոչ թե անվանականից դեպի բայական, այլ հակառակը:

Ռուս լեզվաբանության մեջ նույնպես ձևական քերականության քննադատության հետևանքով ի հայտ եկան խոսքի մասերի նոր դասակարգումներ: Այսպես՝ քննադատաբար է վերաբերվելով դերբայները տարբեր խոսքի մասերի միջև բաշխելուն՝ Լ. Շչերբան դիտարկում է դրանք որպես բայի ձևեր[25]: Նույնը տեսնում ենք նաև Վ. Վինոգրադովի աշխատության մեջ, որտեղ ինֆինիտիվը համարվում է եղանակային իմաստ ունեցող բայաձև[26]:

«Ժամանակակից ռուսերեն» երկհատոր աշխատության մեջ ինֆինիտիվը նույնպես դասվում է բայական համակարգում՝ որպես բայի անորոշ ձև[27]:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ խնդրո առարկա շրջանում առաջին պլան է մղվում ինֆինիտիվի ծագման հարցը, իսկ բնույթի հարցը լուծվում է տարբեր կերպ: Տրամաբանական քերականություն-

---

[21] Schendels E. J. Deutsche Grammatik, Moskau, 1979, S. 99-115. W. Jung, Deutsche Grammatik, Leipzig 1968, 202-215. Helbig G. , Buscha J., Deutsche Grammatik, Leipzig, 1972, S. 82-86. Gouzeeva K. A. Kostygina S. I., The Infinitive, St.-Petersburg, 2000, p. 11., **Костецкая Е. О., Кардашевский В. И.**, Практическая грамматика французкого языка для неязыковых вузов, М., 1997, с. 163-170.

[22] Есперсен О., Философия грамматики, М., 1958.с. 65.

[23] Օ. Եսպերսեն, նշվ. աշխ, էջ 96.

[24] Теньер Л., Основы структурного синтаксиса, М., 1988, с. 434-435.

[25] Л. В. Щерба. Языковая система и речевая деятельность, Л., 1974, с. 92-93.

[26] В. В. Виноградов,Русский язык, М., 1986, с. 44-45, 490-491.

[27] Современный русский язык, под. ред. Д. Э. Розенталя, М. 1979, т. 1, с. 241-242.

ներում այն ավանդույթի համաձայն դիտարկվում է որպես բայի եղանակներից մեկը, ձևական քերականություններում մի կողմից դիտվում է որպես բայական համակարգի մաս, մյուս կողմից՝ առանձին խոսքի մաս[28]: Ավելի ուշ՝ ինչպես, օրինակ՝ Օ. Եսպերսենի կամ Լ. Տենյերի քերականություններում, այն դարձյալ համարվում է առանձին խոսքի մաս, իսկ իմացաբանական քերականություններում մյուս դերբայների հետ մեկտեղ ներառվում է բայական համակարգում:

The Problem of the Origin and Charakter of the Infinitive in Russian and European Grammars

In Russian and European Grammars the problem of the origin of the infinitive is studied in the first place whereas the problem of its charakter is solved other way.
In the logical grammars it is regarded as one modal of the form of the verb. In the formal grammars it is regarded as a part of the verbal system on the one hand and as a separate part of speech on another.

In the later grammars, for example in the grammars of O. Yespeersen an d L. Teniere it ist regarded again as a separate part of speech, and in the gnoseological grammars is included in the verbal system with the other impersonal forms of the verb .

---

[28] Հայտնի է, որ Մ. Աբեղյանը հարելով ձևական քերականությանը՝ անորոշը համարում է անուն ի տարբերություն ռուս և անգլիական ձևական քերականությունների: Կարծում ենք, սա պայմանավորված է տվյալ լեզուների ինֆինիտիվի բնույթով, ինչպես գիտենք, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում ինֆինիտիվն անգամ չի կարող գոյականացվել: